

ՍԻԼԻՍԹՐԷԻ ՄԷՁ

Սիլիսթրէն եւս, պահ մը, ոգեւոր օրեր տեսած է: Կեդրոն թուրք փաշայութեան՝ որուն իշխանութիւնը մինչև Պեսարապիա կ'երկարէր, Սիլիթրէ եղած է եւ հայ կեդրոն մը:

Անցեալ դարու կէսերուն է սակայն որ դպրոցի կը հանդիպինք հոն: Գրաւոր որեւէ յիշատակարան չգտայ: Պէտք եղաւ մարդոց յիշողութիւնը պրպտել քանի մը նօթ ճարելու համար: Համբարձում Հաճի Արթինեան՝ որ Սիլիսթրէի վերջին կէս դարու պատմութիւնն է ինքը՝ պատմեց թէ 1854-էն առաջ պոլսեցի Աւետիս վարժապետ մը տեսած է Սիլիսթրէն: Խրիմի պատերազմէն յետոյ է որ եկեղեցիին բակին մէջ դպրոցի մը շէնքը կը կառուցուի, ուր դասաւանդել կուզան Յղիա անուն քահանայ մը, եւ Յակոբ վարժապետ: 1866-ին է սակայն որ դպրոցը զարկ կը ստանայ, շնորհիւ Կոնկուառ անուն հայ ուսուցչի մը որ Փարիզէն կուգար: Աս է որ Սաղմոսն ու Նարեկը կը վերցնէ, ու հիմը կը դնէ եւրոպական կրթութեան մը՝ հաստատելով նոյնիսկ մարմնամարզ ու երաժշտութիւն: Կարճ կ'ըլլայ սակայն իր գործունէութիւնը, որովհետեւ տեղացիները չեն կրնար մարտել իր նորութիւնները: Անկէ յետոյ կը յիշուին Անդրանիկ վարժապետ, եւ Ասատուր Փափագեան, բայց մանաւանդ Յովհաննէս վարժապետը (յետոյ Պուքրէշի մէջ քահանայ՝ Տէր Յարութիւն անունով), որ 1869-1873 մ.է. ճիշդ կը թափէ հայախօս դարձնելու համար Սիլիսթրէն: Ինք է որ կը հաստատէ հայկարանութեան, ճարտասանութեան, քերականութեան, Հայաստանի եւ ընդհ. աշխարհագրութեան դասերը, եւ իր օրով է որ դպրոցը նոր շէնք կ'ունենայ: Անկէ յետոյ կուգան Բիւզանդ վարժապետ, Յովհ. քահ. Մանդակունի, Գասպար վարժապետ եւ Գէորդ Օվաճըքեան՝ որոնցմէ վերջին երկուքին օրով ընդունուած էր խառն դաստիարակութիւնը: 1889-ին Գրիգոր Սիմոնեան նոր զարկ կուտայ դպրոցին: 1895-97 Արշակ Շալճեանն է զըզրոցին տեսուչը, որ Սիլիսթրէի մէջ հիմը կը դնէ մշակութային միութեան մը, Ռաֆֆիին, որ կ'ապրի ցայսօր: 1898-1900, Կեդրոնականցի մըն է դպրոցին ղրււիւր, Տաքէսեան անուն: Յետոյ, մինչեւ 1908, կը յիշուին իբր ուսուցիչ

Տաճատ Պէյլէրեան, Յովհաննէս Շեկոյեան, Յէրմանեան, Ստ. Ապագան, Ղազարոս Նահապետեան եւ Աւետիս Եազըճեան:

Փակագծի մէջ յիշենք թէ Սիլիսթրէի հայերը միշտ ալ նախանձախնդիր եղած են հայ շունչը պահպանելու: Այդ նախանձախնդրութիւնը մինչեւ մեր օրերը կուգայ: Այնպէս որ պատերազմէն յետոյ հոն ալ կը յամառի զըզրոց պահելու ճիշդը:

ՔՕՆՍՏԱՆՅԱՅԻ ՄԷՁ

Համեմատաբար աւելի նոր գաղութ է Քօնսթանդան: Թէեւ 18-րդ դարու կէսերէն ըսկըսեալ հայեր եղած են հոն, բայց հազիւ յետուն տարի է որ կազմակերպուած գաղութ մը ունինք Քօնսթանդայի մէջ: 1880-էն առաջ դպրոց չի յիշուիր հոն: Այդ թուականին է որ կը հիմնուին եկեղեցիին ու դպրոցը՝ երբ 35-ի չափ հայ ընտանիք կար արդէն: 1896-ի թուրքիոյ դէպքերէն յետոյ Քօնսթանդայի հայութիւնը կը զարգանայ թիւով եւ արժէքով, ու 1898-ին կը կառուցուի դպրոցի նոր շէնքը: Շատ չանցած՝ կառավարութիւնը եւս կը ճանչնայ դպրոցը՝ իբրեւ չորեքդասեան նախակրթարան: Ուսուցիչն էր Ղազարոս Կրօնիկեան՝ Պոլսոյ Կեդրոնականէն: 1906-ին արդէն 100ի կը հասնէր աշակերտութեան թիւը՝ երբ հայ գաղութը արդէն մօտ երկու հազար էր: Այդ շրջանին հայ ուսուցիչներն են Մ. Պետրիկեան եւ Մ. Սէթեան, որոնց կը յաջորդեն Սմբատ Բիւրատ եւ Մ. Հայկունի:

Պատերազմէն յետոյ է որ աւելի զարկ կը ստանայ Քօնսթանդայի դպրոցն ալ:

ՊԱՋԱՐՃԸՔԻ ՄԷՁ

Համեմատաբար նոր է նաեւ Պազարճըքի դպրոցը: Հազիւ քառասուն տարուան կեանք ունի: Բայց հոն ալ ճիշդ եղած է մայրենի շունչը պահպանելու: Այդ ճիշդը զգալի են մանաւանդ պատերազմէն յետոյ՝ երբ աւելի շեշտուած է այլասերման վտանգը վաղուան սերունդին համար, քան պուլկարական ախրապետութեան օրով:

ԿԱԼԱՅԻ ՄԷՁ

Կալայ 1925-ին է որ դպրոցական շէնք ու կանոնաւոր դպրոց ունեցաւ: Բայց հոն ալ երբեմն փորձ եղած է դպրոց պահելու, որ իր